ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,_____,_____ 2009 թվականի N____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի № 1405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետով, «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետով և հաշվի առնելով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում իրավատեր քաղաքացիների և իրավաբանական անձանց գույքային խնդիրներին ամբողջական լուծում տալու նպատակը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի «Երևան քաղաքի վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» № 1405-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը «2010 թվականի հունվարի 1-ն է» բառերից հետո լրացնել. «բացառությամբ սույն որոշման հավելվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 8-րդ, 10-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ և 21-րդ կետերում նշված տարածքների, որտեղ սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետը 2010 թվականի ապրիլի 1-ն է» բառերով ։

2. Լիազորել Երևանի քաղաքապետին Հայաստանի Հանրապետության անունից Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի «Երևան քաղաքի վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» № 1405-Ն որոշման հավելվածի ցանկի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 8-րդ, 10-րդ,18-րդ, 19-րդ, 20-րդ և 21-րդ կետերում նշված ձեռք բերողների հետ կնքած պայմանագրերը համապատասխանեցնել սույն որոշման պահանջներին։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից ։

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի № 1405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման

Համաձայն «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի «Ձեռքբերողը պարտավոր է մինչև բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշմամբ սահմանված սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետից օտարվող սեփականության սեփականատերերին և օտարվող սեփականության նկատմամբ գույքային իրավունքներ ունեցողներին պատշաճ ձևով ուղարկել սեփականության օտարման պայմանագրի (այսուհետ՝ օտարման պայմանագիր) նախագիծը»։

«Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 2008 թվականի հունիսի 10-ի ՀՕ-117-Ն օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետին գույք օտարելու թույլտվություն տալու մասին» թիվ 1529-Ա որոշման համաձայն թույլատրվել է Երևանի քաղաքապետին Երևան քաղաքի վարչական տարածքում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցված և նշված օրենքի ուժի մեջ մտնելու պահին առկա (ներառյալ՝ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում) այն անհատական բնակելի տները և դրանց կից բնակելի նշանակության օժանդակ շինությունները, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերը, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը և (կամ) հողհատկացման հիմքերը անհատույց օտարել այն ֆիզիկական անձի (անձանց, ով (ովքեր) տիրապետում է (են) այդ գույքը՝ որպես սեփական գույք, ինչպես նաև սահմանված կարգով հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման ենթակա տարածքներում սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող անհատական բնակելի տներին կից, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը զավթած պետական սեփականություն հանդիսացող հողամասերի և (կամ) զավթած հողամասերի վրա ինքնակամ կառույցներն օտարել այդ քաղաքացիներին։

ՀՀ Կառավարության 20.11.2008թ. հ. 1405-Ն որոշման հավելվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 8-րդ, 10-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ և 21-րդ կետերում նշված՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքների ձեռքբերողները բավականին ներդրումներ են կատարել նշված տարածքներում քաղաքաշինական ծրագրերի իրականացման նպատակով, մասնակի իրացում են իրականացրել և պայմանավորված վերը նշված հանգամանքով մինչև 2010 թվականի հունվարի 1-ը օտարման գործընթացը հնարավոր չի եղել ավարտել, քանի որ «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 20.12.2007թ. հ. 1529-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի աշխատանքների արդյունքում առաջանում են նոր գույքային միավորներ, որի հետևանքով անհնար է դառնում գնահատել անշարժ գույքը և պատշաճ ձևով ներկայացնել օտարման պայմանագրի նախագիծ։

Հիմք ընդունելով վերը նշվածը և հաշվի առնելով, նշված տարածքում իրավատեր քաղաքացիների և իրավաբանական անձանց խնդիրներին ամբողջական լուծում տալու նպատակը, առաջարկվում է ՀՀ Կառավարության 2008 թվականի նոյեմբերի 20-ի հ. 1405-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում կատարել լրացում և նշված ենթակետով սահմանված օտարման գործընթացը սկսելու վերջնաժամկետ, նույն որոշման հավելված 2-րդ, 3-րդ, 4-րդ, 8-րդ, 10-րդ,18-րդ, 19-րդ, 20-րդ և 21-րդ կետերում նշված տարածքների համար սահմանել 2010թ. ապրիլի 1-ը։

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ